

**ԿՄ-19 տեսակի կոմպրեսորային յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում 11.07.2023թ. ժամը 11<sup>00</sup>–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. 400 լիտր ԿՄ-19 տեսակի կոմպրեսորային յուղի գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել կոմպրեսորային յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2023թ. երրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով:

ԿՄ-19 տեսակի կոմպրեսորային յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՁԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՁ-ՊԸ-ԿՅ-13/11.07.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու

հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
ԿՍ-19 տեսակի կոմպրեսորային յուղ	լիտր	410	Հրազդան ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ 2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ 3. Մոսէսկո ՍՊԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ -1լ 1640դր/ԱԱՀ-ով 2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ-1լ 1830 դր/ԱԱՀ-ով 3. Մոսէսկո ՍՊԸ -1լ 1750 դր-ԱԱՀ-ով

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխան և լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՁ-ՊԸ-ԿՅ-13/11.07.23 ծածկագրով 400 լիտր ԿՍ-19 տեսակի կոմպրեսորային յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ին:
2. Կնքել պայնամագիր «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1640 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, 400 լիտր ԿՍ-19 տեսակի կոմպրեսորային յուղ ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան